1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին» ծրագրի մասին» N Մ-1269-Ա որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում և ծրագրի 10-րդ կետի 1-ին պարբերությունում «2017 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 250,000 դրամի չափով» բառերը փոխարինել «2017 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 125,000 դրամի չափով» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի հուլիսի 1-ին N 2017/601 կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 125,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմիններին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Մարգսյանի կողմից
«22» հունիսի 2017թ

## Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Օգնություն Հայաստանի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին»

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության աջակցությամբ օգնել ՀՀ մարզերի և Ջավախքի հայրազուրկ երեխաներին՝ տարեկան երկու անգամ տրամադրելով դրամական հատկացումներ, մեղմել սոցիալական լարվածությունը և նպաստել աղքատության կրճատմանը:<br><br>Ներկայումս ծրագրում ընդգրկված են 947 երեխաներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | Հայ Օգնության Ֆոնդ (Նյու Յորքի գրասենյակ), Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միություն, անհրկահայ ընտանիքներ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայրը՝ ՀՀ մարզեր և Ջավախք:<br>Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 95 662 000 ՀՀ դրամ:<br>Որից՝<br><br>դրամական օգնություն 90 912 000 ՀՀ դրամ,<br>կազմակերպական ծախսեր 4 750 000 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի մարզերում և Ջավախքում բնակվող 947 հայրազուրկ մինչև 18 տարեկան երեխաներ՝<br>Սյունիքի մարզից 209,<br>Շիրակի մարզից 67,<br>Տավուշի մարզից 48,<br>[illegible] մարզից 380,<br>Արմավիրի մարզից 30,<br>Արագածոտնի մարզից [illegible],<br>Կոտայքի մարզից 62,<br>Գեղարքունիքի մարզից 33,<br>Ջավախքից [illegible] երեխաներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.01.2017 – 31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Դրամական օգնության տրամադրում յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ՝ 100 ԱՄՆ դոլարի համարժեք դրամ:<br>Ընդհանուր գումարը՝ 90 912 000 ՀՀ դրամ:<br><br>2. Հայ Առաքելական եկեղեցու թեմերի հոգևոր սպասավորների հետ համատեղ շահառու երեխաների մկրտության արարողությունների իրականացում: Ծախսեր չեն նախատեսվում:<br><br>Շահառուների ընտրությունը կատարվում է նրանցից ստացված դիմումների հիման վրա՝ համագործակցելով տեղական իշխանությունների և եկեղեցու թեմերի հետ, ինչպես նաև տնայցերի հիման վրա:<br><br>Կազմակերպական ծախսեր՝ 4 750 000 ՀՀ դրամ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 95 662 000 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.01.2017 - 30.06.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 125 000 դրամի չափով՝ պայմանագիր N ID 1604 կնքված 18.06.2013թ «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ФԲԸ-ի (ք. Երևան 0012, Հրաչյա Քոչար 13/1, ՀՎՀՀ 00930093) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների համար 01.07.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 125 000 դրամի չափով՝ պայմանագիր N 2017/601 կնքված 14.06.2017թ «ՄՏՍ Հայաստան» ФԲԸ-ի (ք. Երևան 0015, Արգիշտի 4/1, ՀՎՀՀ 01551651) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև:<br><br>Ակնկալում ենք ավտոմեքենայի վառելիքի ձեռք բերման համար 01.01.2017 - 31.12.2017 թվականի ընթացքում ԱԱՀ-ից ազատում 2 500 000 դրամի չափով՝ պայմանագիր 132/16, կնքված 14.11.16թ «Ֆլեշ» ՍՊԸ-ի (ք. Երևան, Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789) և Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, ք Երևան, |

| | | |
|---|---|---|
| | | Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի սպասարկման համար ծախսվելու է 4 750 000 ՀՀ դրամ՝ ծրագրի ընդհանուր արժողության 5%-ը:<br>Ծրագրի սպասարկումը ներառում է<br><br>ծրագրի ղեկավարի աշխատավարձ 2 000 000 ՀՀ դրամ<br>կապի ծառայություն 250 000 ՀՀ դրամ<br>տնայցերի հետ կապված ծախսեր 2 500 000 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Սույն ծրագրի իրականացման շրջանակներում ՀՕՖ-ը համագործակցում է՝<br>1. ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի<br>2. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության,<br>3. Տեղական ինքնակառավարման մարմինների<br>4. Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան, Շիրակի, Սյունիքի, Տավուշի և Վիրահայոց թեմերի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, ԱՄՆ Արևելյան թեմի Տիկնանց միության և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ - 532 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N Մ-820-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 21-ի N 01.1/14-2/11149-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 21-ի N 06/3-8/21393-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հուլիսի 24-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի նշված հատվածների կառուցման հեղինակային և տեխնիկական հսկողություն» օժանդակ ծրագրի մասին» N Մ-820-Ա որոշմամբ (2016 թվականի հունիսի 1-ի N Մ-569-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 8-րդ կետում «մինչև 2016 թվականի հոկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ -533 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՆԱՐԵԿԱՑԻ» ԱՐՎԵՍՏԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 21-ի N 01.1/14-2/11198-17, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2017 թվականի հունիսի 22-ի N 01/3.1/3632-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 23-ի N 06/3-8/21653-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար՝ երաժիշտ-կոմպոզիտոր Սերժ Թանկյանի կողմից «Նարեկացի» արվեստի միավորում» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված «Ստեյնվեյ-Բ» ռոյալի (432 կգ ընդհանուր քաշով, 18,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2,173.20 ԱՄՆ դոլար, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց օգտագործման ծրագիրը:

2. «Նարեկացի» արվեստի միավորում» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ - 534 - Ա**
**քաղ. Երևան**

## «Ա.Ի. ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵրՖԻ)» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N01.1/14-2/10362-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 02/14/9850-17, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի հունիսի 13-ի N 1/02.1/6042-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 01/10/7570-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 12-ի N 06/3-8/20355-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ա.Ի! Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 192,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագիրը (կցվում է):

2. «Ա.Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

« Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ) հիմնադրամի» տնօրեն Աշոտ Չիլինգարյանի կողմից

31. 05, 2017թ.

«Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքիի գործունեությանը»

8/2

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աջակցել՝<br>–Հայաստանի Հանրապետության գիտական համակարգի, գիտա-տեխնիկական զարգացմանն ու արդիականացմանը,<br>–միջազգային գիտական համակարգի հետ ՀՀ գիտական հանրության ինտեգրման գործընթացին,<br>–մտավոր ներուժի արտահոսքի կանխման գործընթացին,<br>–ՀՀ գիտական համակարգը երիտասարդ կադրերով համալրման գործընթացին,<br>–միջազգային չափորոշիչներին համապատասխանող գիտական հետազոտությունների իրականացմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի իրականացման համար նախատեսվում է օրենքով սահմանված կարգով ԱԱՀ–ից ազատել ՀՀ ներսում գնվող ապրանքները և ծառայությունները, և արտերկրից գնվող ապրանքների ներմուծման ժամանակ օգտվել մաքսային զանազան վճարումների արտոնություններից |
| 3. | Բարեգործները | - «Ամերիկայի հայ ճարտարագետների և գիտնականների ընկերակցություն »<br>Armenian Engineers and Scientists of America, Inc.<br>117 S. Louise St. #306<br>Glendale, CA 91205<br>- «Տիեզերական ճառագայթների բաժանմունքի (Տ&Բ) բարեկամներ»<br>CRD Friends : P.O. Box 655, Menlo Park, CA 94026<br>- Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն.<br>212-319-6383; 55East 59th Street New York, NY 10022-1112 |
| 4. | Ծրագրի կատարողը | Ծրագիրը իրականացնում է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ) » հիմնադրամը (ք. Երևան, Ալիխանյան եղբայրների փ. 2, ՀՎՀՀ՝ 01202364 ) |

8/2

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության, ք.Երևան, Ալիխանյան եղբայրների փողոցում գտնվող թիվ 2 մասնաշենքում, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզի տարածքում գտնվող «Նոր-Ամբերդ» և «Արագած» բարձրադիր գիտական կայաններում: Գիտության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 192.000.000 (հարյուր իննսուներկու միլիոն) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Տիեզերական Ճառագայթների Բաժանմունքի երիտասարդ գիտականներն ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող անձնակազմը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017թ Սեպտեմբերի 1–ից, մինչև 2022թ. Սեպտեմբերի 1–ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գումարների բաշխվածությունը հետևյալն է՝<br>– անհատական ֆինանսական օժանդակություն և աջակցություն (պարգևատրումների տեսքով) բաժանմունքի 20քան) երիտասարդ գիտաշխատողներին՝ 50,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը), ու բարձրադիր գիտական կայանների կենսագործունեությունն ապահովող և սպասարկող 15 (տասնհինգ) հոգուց բաղկացած անձնակազմին՝ 20,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) .<br>-Ամենամյա գիտաժողովների,կոնֆերանսների սեմինարների և բարձր էներգիայի աստղաֆիզիկայի ամառային դպրոցների անցկացում Միջազգային գիտական միջոցառումների շրջանակներում նախատեսվում են կազմակերպական, տարածքի վարձակալման, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 18.000,000 դրամ , որից՝<br>01.09.17թ.-01.09.18թ. – 3,600,000 դրամ,<br>01.09.18թ.-01.09.19թ. – 3,600,000 դրամ,<br>01.09.19թ.-01.09.20թ. - 3,600,000 դրամ<br>01.09.20թ.-01.09.21թ. - 3,600,000 դրամ<br>01.09.21թ.-01.09.22թ. - 3,600,000 դրամ<br>– գիտական գործուղումներ – 11,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) |

8/2

| | | |
|---|---|---|
| | | –հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների և մենագրությունների հրատարակում և հրատարակված նյութերի առաքում՝ – 10,000,000 դրամ (2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) դրամ,<br><br>-Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ և պարագաներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլլոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա – 18.000.000 դրամ (2017թ. սեպտեմբերի1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում –6.000.000(2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը):<br><br>-Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների ( սենյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդի, վառելիքաքսայուղային նյութերի) ձեռբերում ( 18.000.000 դրամ, ապրանքները և ծառայությունները ձեռք են բերվելու Հայաստանի Հանրապետության ներսում, 2017թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում):<br><br>-Արտաճանապարհային մարդատար (2) և բեռնատար (1) ավտոմեքենաների ներմուծում(35.000.000 դրամ) 2018թ. ապրիլ- 2020թ. հոկտեմբեր<br><br>-Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր(6.000.000 դրամ) |

8/2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Գիտաժողովների շրջանակներում նախատեսվում են հատուկ սարքավորումների ( լազերային պրոյեկտորներ և այլն) ձեռք բերում, կազմակերպական, տրանսպորտային, սննդի կազմակերպման ծախսեր՝ 18,000,000 դրամ.<br><br>2. Հրատարակչական ծախսեր: Բաժանորդագրություններ, գիտաժողովների նյութերի, գիտական հոդվածների, ժողովածուների, մենագրությունների հրատարակում և հրատարակված նյութերի առաքում՝ – 10,000,000 դրամ.<br><br>3. Գիտափորձարարական սարքերի արդիականացման ու կատարելագործման համար նոր սարքավորումների ներմուծում արտերկրից՝ սերվերներ, ցանցային սարքավորումներ և պարագաներ, միջուկային էլեկտրոնիկական սարքեր, օսցիլլոգրաֆներ, մետերոլոգիական կայաններ, կայծակների սենսորներ, արագ գործողության ֆոտոտեխնիկա (18մլն դր) և այլ օժանդակ նյութերի ձեռքբերում Հայաստանի Հանրապետության ներսում (6 մլն դր).<br><br>4. Գիտական կայաններում երիտասարդ գիտնականների և անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների ծառայությունների ( սենյակների, աշխատատեղերի, ջրամատակարարման և ջեռուցման համակարգերի վերանորոգում) և գոյատևման ծախսերի համար ապրանքների (անհրաժեշտ նյութերի, կահույքի, սարքավորումների, սննդամթերքի, վառելիքա-քսայուղային նյութերի) ձեռքբերում՝18մլ դրամ:<br><br>5. Արտաճանապարհային մարդատար երկու ավտոմեքենաների (24մլն դրամ) ներմուծում՝ ամառային արշավախմբերի անձնակազմերի տեղափոխման, գիտական միջոցառումների սպասարկման և այլ կարիքների համար: |

| | | |
|---|---|---|
| | | 6. Արտաճանապարհային մեկ բեռնատար ավտոմեքենայի (11 մլն դրամ)ներմուծում՝ փորձարարական սարքավորումների և կայանների կարիքներին անհրաժեշտ այլ բեռների տեղափոխման համար: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը ամսեկան | Ծրագրի հաշվապահի աշխատավարձ՝ ամսական 100.000 դրամ , ընդամենը 5 տարվա համար՝ 6.000.000 դր |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է շարունակել սերտ համագործակցություն՝ ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ գիտության և կրթության նախարարության գիտության պետական կոմիտեի, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության և Հայհիդրոմետ ծառայության, «Գերմանական էլէկտրոնային սինքրոտրոնի» (DESY-Համբուրգ), Կառլսռուհեյի Տեխնոլոգիական ինստիտուտի (KIT), Մաքս Պլանկի անվ. Ֆիզիկայի ինստիտուտի (MPI - Մյունխեն), ամերիկյանՍտենֆորդի համալսարանի (STANFORD UNIVERSITI ) հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման արդյունավետությունը, հիմնականում, վերահսկվելու է դոնոր կազմակերպության կողմից՝ ներկայացվող ընթացիկ հաշվետվությունների հիման վրա: Միևնույն ժամանակ սահմանված կարգով համապատասխան հաշվետվություններ են ներկայացվելու ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով : |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ- 535 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 13-ի N 01.1/14-2/10575-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 12-ի N 06/3-8/20270-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ունիվերսալ-Օրդեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02572382) 2017 թվականի մայիսի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խոհանոցային սարքավորումների և կահավորանքի մատակարարման, մոնտաժման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 8,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01801249) 2017 թվականի մայիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու հատ մետաղական պտտվող աստիճանների տեղադրում իրենց աստիճանահարթակներով՝ 16,666,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ- 536 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N Մ-334-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 2-ի N 01.1/14-2/9928-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 2-ի N 06/3-8/19208-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-334-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2017 թվականի մայիսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռք բերում՝ 216,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2017 թվականի N Մ- 537 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 2-ի N 01.1/14-2/9929-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 2-ի N 06/3-8/19214-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա, 2016 թվականի նոյեմբերի 14-ի Մ-1074-Ա և դեկտեմբերի 23-ի Մ-1205-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արարատցեմենտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04000255) 2017 թվականի մայիսի 30-ին կնքված՝ N 23-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում պորտլանդցեմենտի ձեռք բերում՝ 225,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ- 538 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 19-ի N 01.1/14-2/10937-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 15-ի N 06/3-8/20833-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 02594556) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի ստեղծում» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա, 2016 թվականի նոյեմբերի 14-ի Մ-1074-Ա և դեկտեմբերի 23-ի Մ-1205-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Յանգ Ինվեստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03314005) 2017 թվականի մայիսի 2-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում շինարարական աշխատանքների իրականացում՝ 614,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**23 հունիսի 2017 թվականի N Մ- 539- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 21-ի N 01.1/14-2/11152-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 19-ի N 06/3-8/21106-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էկոլոգիա Վ.Կ.Հ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04719486) 2017 թվականի մայիսի 2-ին կնքված՝ N 70 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական կամ այլ թափոնների դուրսբերման և ոչնչացման ծառայությունների մատուցում՝ 15,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2017 թվականի N Մ- 540 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 23-ի N 01.1/14-2/11372-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 23-ի N 06/3-8/21572-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա որոշմամբ (2017 թվականի հունվարի 27-ի N Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քարդ ԱգրոՍերվիս» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555961) 2017 թվականի հունիսի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անասնապահական և գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**23 հունիսի 2017 թվականի N Մ-541-Ա**
**քաղ. Երևան**

# ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՄԱՔՈՒՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» WE201700188 ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 8-ի N 01.1/14-2/10267-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 8-ի N 02/14/ 9799-17, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2017 թվականի 13-ի N 01/18.2/3617-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 6-ի N 06/3-8/19636-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության (ՀՎՀՀ՝ 01526777) կողմից իրականացվող՝ 125,739,904 դրամ ընդհանուր արժեքով «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» WE201700188 ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109451) 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված պայմանագրում (WE201700188) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության 18 համայնքում խմելու ջրի ջրամատակարարման խողովակների մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 69,222,450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) անհատ ձեռնարկատեր Արմեն Մաթևոսյանի հետ (ՀՎՀՀ՝ 47764653) 2017 թվականի ապրիլի 28-ին կնքված պայմանագրում (WE201700188) նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունիսի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ընկած ժամանակա-



հատվածում Հայաստանի Հանրապետության համայնքներում 31 ցայտաղբյուրի մատակարարման, մոնտաժման և փորձարկման աշխատանքների իրականացում՝ 7,785,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Վերջին օրերի սրբերի բարեգործական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Ծրագի[illegible] է
Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կ[illegible]
[illegible] 2017թ.
Կորպորացիայի կառավարիչ [illegible] (Gerald Causse)

Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարման
Ծրագիր WE201700188

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Ներկայացվող ծրագրի նպատակն է ապահովել և բարելավել խմելու մաքուր ջրի ջրամատակարարումը [illegible] համայնքների բնակիչներին: Հայաստանի գյուղերի մեծ մասը խմելու ջրային ցանցերի վերա[illegible] կարիք [illegible]: Առաջարկվող 18 գյուղերի որոշ մասում, խմելու ջուրը մատակարարվում է հնամաշ՝ օգտագործմա[illegible] խողովակներով: Ծրագրով նախատեսվում է այդ խողովակների փոխարինումը նոր խողովակներով: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի բարեգործական որակման նպատակն է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնություններից: |
| 3. Բարեգործը | Բարեգործը՝ Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիա Շահույթ Չհետապնդող Կազմակերպությունն է, հասցեն՝ ԱՄՆ-ի Յուտա նահանգ, Սոլթ Լեյք Սիթի քաղաք: |
| 4. Ծրագրի կատարողը | Ծրագրի կատարողը՝ Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունն է, հասցեն՝ ք. Երևան, Արամ Խաչատրյան 21/47, ՀՎՀՀ 01526777: |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ 18 համայնքներում (դրանք ներկայացված են 7-րդ կետում): Ծրագրի բնագավառը՝ սոցիալական: |
| 6. Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 125739904 (հարյուր քսանհինգ միլիոն յոթ հարյուր երեսունինը հազար ինը հարյուր չորս) ՀՀ դրամ: Ծրագրի բյուջեն հաստատվել է Կորպորացիայի հոգաբարձուների խորհրդի կողմից: Յուրաքանչյուր համայնքի ծրագրի բյուջեն հաստատվել է Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի կենտրոնական գրասենյակում: Ծրագրի բյուջեն ըստ համայնքների և ծրագրի կատարման պայմանները համաձայնեցված են բոլոր համայնքների ղեկավարների հետ նրանց հետ կնքելով համապատասխան համաձայնագրեր: |
| 7. Բարեգործություն ստացողները | Բարեգործություն ստացողներն ըստ մարզերի և ըստ համայնքների հետևյալն են. |

| հ/հ | Մարզեր | Գյուղերի անվանումը | բնակչ. թիվը |
|---|---|---|---|
| 1 | Արարատ | Նարեկ | 1550 |
| 2 | Արարատ | Ջրահովիտ | 1550 |
| 3 | Արագածոտն | Ափնա | 890 |
| 4 | Արագածոտն | Ավշեն | 590 |
| 5 | Լոռի | Լեռնանցք | 1600 |
| 6 | Արագածոտն | Վարդենիս | 1450 |
| 7 | Լոռի | Գոգարան | 1600 |
| 8 | Վայոց Ձոր | Հորս | 915 |
| 9 | Շիրակ | Փոքր Մանթաշ | 3200 |
| 10 | Արագածոտն | Ծաղկահովիտ | 2250 |
| 11 | Վայոց Ձոր | Խոյնիկ | 1000 |
| 12 | Արարատ | Մարմարաշեն | 4500 |
| 13 | Արագածոտն | Զոր[illegible] | 890 |
| 14 | Շիրակ | [illegible] | 930 |
| 15 | Տավուշ | [illegible] | 1330 |
| 16 | Լոռի | [illegible] | 1050 |
| 17 | Արագածոտն | [illegible] | 850 |
| 18 | Լոռի | [illegible] | 530 |
| | Ընդամենը | | 26675 |

Համայնքները ընտրվել են կարիքավորության [illegible] բնակչին ընկնող ծախսի հաշվարկի հիման վրա: Ամբողջ աշխարհում նմանատիպ ծրագրերի իրականացման համար Կազմակերպության չափանիշների համաձայն յուրաքանչյուր բնակչին բաժին ընկնող ծախսի գումարը պետք՝ կազմի 10 ԱՄՆ դոլլարին համապատասխան գումար: Այս ծրագրից կօգտվի 26675 մարդ:

| | |
|---|---|
| 8. Ծրագրի իրականաց-ման տևողությունը | Ծրագիրը կիրականացվի 2017թ. հունիսի 1-ից և կավարտվի ոչ ուշ քան 2017թ. նոյեմբերի 30-ը: Ծրագրի հիմնական միջոցառումները կիրականացվեն այդ ժամանակաշրջանում: |
| 9. Միջոցառումների նկա-րագրությունը և ժամկետ-ները, անհրաժեշտ ֆինան-սական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է համայնքներում տեղադրել 35145 մետր խմելու ջրի պոլիէթիլենային խողովակներ: Խողովակները և դրանց մոնտաժման համար անրաժեշտ պարագաները 67850450 (վաթսունյոթ միլիոն ութ հարյուր հիսուն հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ արժեքով ձեռք են բերվելու "Վեդի պլաստ" ՍՊԸ-ից ք. Վեդի, Կոմիտասի 1, ՀՎՀՀ 04109451, Հ/h 220123330239000, ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ Վեդու մ/ճ: Այդ ընկերությանը պետք է վճարվի նաև 1372000 (մեկ միլիոն երեք հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ գումար վերոհիշյալ խողովակները համայնքներ տեղափոխելու տրանսպորտային ծախսերի, դրանց մոնտաժման և փորձարկման աշխատանքների համար, ընդամենը "Վեդի պլաստ" ՍՊԸ-ին պետք է վճարվի 69222450 (վաթսունինը միլիոն երկու հարյուր քսաներկու հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ:<br>Ծրագրում ընդգրկված համայնքներում տեղադրվելու են 1-3 ցայտաղբյուրներ, ընդամենը՝ 31 հատ՝ 7785500 (յոթ միլիոն յոթ հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ աժեքով՝ ներառյալ դրանց տեղափոխման արժեքը: Դրանք մատակարարվելու, մոնտաժվելու և փորձարկվելու են Անհատ ձեռնարկատեր Արմեն Մաթևոսյանի կողմից՝ ՀՎՀՀ 47764653, ՀՀ, Արարատի մարզ, գյուղ Մխչյան, Հայէկոնոմբանկ Արտաշատ մասնաճյուղ h/h 163098289495: Այս աշխատանքների կատարման համար Անհատ ձեռնարկատեր Մաթևոսյան Արմենի հետ կնքված պայմանագրի պատճեն ներկայացվում է:<br>Ծրագրով նախատեսված միջոցառումները իրականացվելու են 2017թ. հունիսից և կավարտվեն ոչ ուշ քան 2017թ. նոյեմբերի 30-ը: Պահանջվող ապրանքների մատակարարումները կսկսվեն 2017թ. հուլիսի 1-ից և կավարտվեն ոչ ուշ քան 2017թ. սեպտեմբերի 15-ը: Միջոցառումները մանրամասն նկարագրված են 10-րդ կետում:<br>Օգտագործվող այլ շինանյութերի ու այլ աշխատանքների՝ պոլիէթիլենային խողովակների տեղադրման համար պահանջվող խրամուղիների փորման, դրանց նախապատրաստման, ճանապարհների անցումների կառուցման, խրամուղիների հետլիցքի, խողովակների կցամասերի, մետաղյա խողովակների, պահանջվող գործիքների արժեքը նախատեսվում է 38881954 (երեսունութ միլիոն ութ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր հիսունչորս) ՀՀ դրամի չափով: Նշված գումարը տրամադրվելու է համայնքների [illegible] շինանյութերի գնման և համայնքի ուժերով վերանորոգման ու նախապատրաստական աշխատանքների [illegible] համար:<br>Ծրագրով [illegible]ված են նաև տրանսպորտային, թարգմանչական, ինժեներական ծառայությունների, ծրագրի վերահսկողու-թյան [illegible] ծախսեր՝ ընդամենը՝ 9850000 (ինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Այս [illegible] Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական Կորպորացիայի Հայաստանյան Ներկայացուցչությունը հարկային արտոնությունների նախատեսում ստանալ: Ծրագրով ապրանքների ներմուծում չի նախատեսվում:<br>Ծրագրի [illegible] անհրաժեշտ բոլոր նյութերը ձեռք են բերվելու տեղական [illegible] |

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

| հ/հ | Մարզեր | Գյուղերի անվանումը | ՎՕՍ Բարեգործական Կորպորացիայի կողմից վերանորոգվող խմելու ջրագծեր: բնակչ. թիվը | Պոլիէթիլենային և մետաղյա խողովակներ (մետր) | խողովակների, կցամասերի և դրանց մոնտաժման արժեքը՝ դրամ | շինանյութերի և վերանորոգման աշխատանքների արժեքը՝ դրամ (տրվում է համայնքներին) | Ընդամենը՝ դրամ | ցայտաղբյուրներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Արարատ | Նարեկ | 1550 | 2550 | 4139900 | 1486290 | 5626190 | 1 |
| 2 | Արարատ | Ջրահովիտ | 1550 | 3250 | 4798700 | 1149640 | 5948340 | 2 |
| 3 | Արագածոտն | Ափնա | 890 | 650 | 1841900 | 3937940 | 5779840 | 1 |
| 4 | Արագածոտն | Ավշեն | 590 | 400 | 792800 | 3687740 | 4480540 | 1 |
| 5 | Լոռի | Լեռնանցք | 1600 | 2700 | 5706600 | 1616650 | 7323250 | 2 |
| 6 | Արագածոտն | Վարդենիս | 1450 | 1150 | 3268700 | 849570 | 4118270 | 2 |
| 7 | Լոռի | Գոգարան | 1600 | 3150 | 6696700 | 1833530 | 8530230 | 3 |
| 8 | Վայոց Ձոր | Հորս | 915 | 1480 | 2836800 | 2131375 | 4968175 | 1 |
| 9 | Շիրակ | Փոքր Մանթաշ | 3200 | 3220 | 7962200 | 3610820 | 11573020 | 2 |
| 10 | Արագածոտն | Ծաղկահովիտ | 2250 | 2745 | 8474250 | 2165070 | 10639320 | 2 |
| 11 | Վայոց Ձոր | Խաչիկ | 1000 | 750 | 1002200 | 1814415 | 2816615 | 2 |
| 12 | Արարատ | Մարմարաշեն | 4500 | 4500 | 7109200 | 2234670 | 9343870 | 3 |
| 13 | Արագածոտն | Ձորագլուխ | 890 | 310 | 986300 | 4443215 | 5429515 | 1 |
| 14 | Շիրակ | Գետափ | 930 | 1950 | 3117700 | 1725518 | 4843218 | 2 |
| 15 | Տավուշ | Իծաքար | 1330 | 970 | 1544300 | 2115355 | 3659655 | 2 |
| 16 | Լոռի | Լեջան | 1050 | 2100 | 4002400 | 1612755 | 5615155 | 2 |
| 17 | Արագածոտն | Կայք | 850 | 320 | 508400 | 1303650 | 1812050 | 0 |
| 18 | Լոռի | Գարգառ | 530 | 2950 | 3061400 | 1163751 | 4225151 | 2 |
| | Ընդամենը | | 26675 | 35145 | 67850450 | 38881954 | 106732404 | 31 |

| | | |
|---|---|---|
| խողովակների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | 1372000 |
| ցայտաղբյուրների պատրաստման ծախսեր | 31 հատ x 210500 դրամ | 6525500 |
| ցայտաղբյուրների տեղափոխման և մոնտաժման ծախսեր | | 1260000 |
| Ընդամենը խողովակների և ցայտաղբյուրների գծով ծախսեր | | 115889904 |

Ծրագրով նախատեսված տրանսպորտային, թարգմանչական, ինժեներական ծառայությունների, ծրագրի վերահսկողության ու մոնիտորինգի ծախսեր՝ ընդամենը՝ 9850000 (ինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով: Այս ծախսերի գծով *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* [illegible] Ներկայացուցչությունը հարկային արտոնություններ չի նախատեսում ստանալ: Ծրագրով ա[illegible] չի նախատեսվում:

11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի [illegible] Ներկայացուցչությունը վարչական ու կազմակերպչական ծախսերի համար հարկայի[illegible] ստանալ, քանի որ այդ ծախսերը չեն կատարվելու նվիրատվության գումարներից:

12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ

*Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* [illegible] Ներկայացուցչությունը աշխատելու է ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակ[illegible] [illegible]ածքային կառավարման և զարգացման նախարարության, համապատասխան նախարարությունների և [illegible], ինչպես նաև անմիջապես յուրաքանչյուր շահառու համայնքի հետ:

13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը

Ծրագրի վերահսկողությունը իրականացվելու է Դոնորի՝ *Վերջին Օրերի Սրբերի Բարեգործական* Կորպորացիայի և Կորպորացիայի լիազորված անձի Վիլիամ Ս. Հարքերի կողմից:
Ծրագրի կատարողը հաշվետու է Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ծրագրի իրականացման ընթացքում և դրա ավարտից հետո սահմանված կարգով և ժամկետներում Հանձնաժողովին ներկայացնելու է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններ և տեղեկատվություն:
Մարդասիրական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից նշանակված անձի մասնակցությունը ծրագրի վերահսկողության իրականացման գործընթացում մեծապես կողջունվի:

Ծրագրի լիազորված անձ Վիլիամ Ս. Հարքեր

8/6.10

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հունիսի 2017 թվականի N Մ-542- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 8-ի N 01.1/14-2/10268-17 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի 09-ի N ՆՁ/22.2/7345-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 7-ի N 06/3-8/19771-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 49 արկղ, 395 կգ քաշով, 70,991.61 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,144.69 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

*Ստացվող բեռի ցանկ*

*Ինվոյսի N I-76083 [illegible]*

| Նո | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 1400 | 955.36 |
| 2 | Իմիպենեմ 500մգ / Ցիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 470 | 2189.26 |
| 3 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 10մլ, ամպուլ | 3000 | 352.20 |
| 4 | Մագնեզիումի օքսիդ, 300մգ, դիտ. | 1080 | 48.24 |
| 5 | Դելամանիդ, 50մգ, դիտ, բլիստեր | 24192 | 66588.48 |
| 6 | Կալիումի քլորիդ, 600մգ, դանդաղ արձակող, դիտ. | 600 | 17.50 |
| 7 | Ասեղ, Լուեր, 23G (0.6x30mm), կապույտ, ենթամաշկային, ներմկանային մանկ. | 21000 | 273.00 |
| 8 | Ներարկիչ, Լուեր, 10մլ | 7300 | 247.47 |
| 9 | Ասեղ, Լուեր, 19G (1.1x40mm), բաց դեղնագույն, ներերակային | 19400 | 320.10 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | | 70991.61 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հունիսի 2017 թվականի N Մ-543- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՁԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 01.1/14-2/10360-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հունիսի 12-ի N ՆՁ/22.2/7395-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 9-ի N 06/3-8/20126-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի (ՌԴ ՀԿԳԻ) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ՌԴ Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հակազդմանն ուղղված նյութատեխնիկական աջակցության պայմանագրի շրջանակներում ստացված բեռի՝ (թեստ-հավաքածուներ և բժշկական նշանակության ապրանքներ՝ 80.5 կգ քաշով, 1,341,268.75 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, Ձվարթնոց ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

3/6.1

**ՑԱՆԿ**

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին ՌԴ Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի կողմից որպես նվիրաբերություն տրամադրված բեռի

| # | Անվանում | ԱՏԳԱԱ ծածկագիր | Քանակ | Գումար /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Սեկվենացիոն ռեակցիայի ռեագենտների հավաքածու BigDye Terminator v1.1 Cycle Sequencing | 3822000000 | 14 | 1 162763.00 |
| | | 3824999609 | 28 | |
| 2 | Ֆորմամիդ դեիոնիզացված գենետիկ հետազոտության համար | 2924190000 | 1 | 4665.00 |
| 3 | ՄԻԱՎ 1,2 ԱԳ/ԱՏ (հավաքածու 2) | 4016930005 | 27 | 130 011.75 |
| 4 | Խորշիկանոց 96 պլաշկայի ռետինե կափարիչ | 3926909709 | 1 | 35 690.00 |
| 5 | Պլաշկա, 96 խորշիկանոց, 0,2մլ Well Reaction Plate, MicroAmp | 3002190000 | 2 | 8 139.00 |
| | Ընդամենը | | | 1341268.75 |

*Ապրանքը բաղկացած է 2 բաղադրիչից, որոնցից յուրաքանչյուրը մատակարարի կողմից ներկայացված է առանձին ԱՏԳԱԱ ծածկագրով,

- 1-ին բաղադրիչը 14 հատ ընդհանուր քանակով՝ սեկվենացիոն ռեակցիայի ռեագենտներ - նախատեսված են սեկվենացիոն ռեակցիա իրականացնելու համար,
- 2-րդ-ը՝ 28 հատ ընդհանուր քանակով՝ հնգապատիկ բուֆեր սեկվենացիայի համար - հանդիսանում են լուծիչ, նախատեսված են սեկվենացիոն ռեակցիայի ռեագենտների լուծելու համար:

Ընդհանուր քաշը՝ 80,5 կգ, ընդհանուր արժեքը՝ 1341268,75 (մեկ միլիոն երեք հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր վաթսունութ) ռուսական ռուբլուն և 75 կոպեկին համարժեք դրամ, ներառյալ փոխադրման ծախսերը:

ՏՆՕՐԵՆ ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-544- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-044-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 12-ի N 01.1/14-2/10477-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 9-ի N 06/3-8/20239-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դոքս Քոմպյուտր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04718853) 2017 թվականի հունիսի 1-ին կնքված՝ N Գ-15/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ատամնաբուժական ռենտգեն սենսորների արդյունքները թվայնացնելու և արխիվացնելու համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ 3,025,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Անտարես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2017 թվականի հունիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության տարեկան հաշվետվության տպագրում՝ 167,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հունիսի 2017 թվականի N Մ-545- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1009-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 01.1/14-2/10471-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 9-ի N 06/3-8/20137-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 21-ի «ՄԻԱՎ/ ՁԻԱՀ-ի կանխարգելումը հետսովետական երկրներում» ծրագրի մասին» N Մ-1009-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2017 թվականի մարտի 29-ին կնքված՝ N AT-AU-026-17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև 2017 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,320 եվրոյի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**23 հունիսի 2017 թվականի N Մ-546- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1184-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 13-ի N 01.1/14-2/10572-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 12-ի N 06/3-8/20271-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Կովկասյան ընձառյուծի պահպանությունը Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-1184-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արգումենտ» խորհրդատվական բյուրո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00886099) 2017 թվականի մայիսի 19-ին կնքված՝ N 04/17-GE0060 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի գնահատման և համայնքային զարգացման փոքր ծրագրերի նախագծերի պատրաստման աշխատանքների իրականացում՝ 1,880,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**23 հունիսի 2017 թվականի N Մ-547- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N Մ-1136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2017 թվականի հունիսի 1-ի N 48 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 13-ի N 01.1/14-2/10570-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 12-ի N 06/3-8/20265-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1067-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)» N Մ-1136-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 10-ի N Մ-201-Ա որոշման խմբագրությամբ) որոշման 1-ին կետի առաջին ենթակետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

«N 04/16-AM0019 պայմանագրում և 2017 թվականի մարտի 1-ին» բառերից հետո լրացնել հետևյալ՝ «ու մայիսի 30-ին կնքված՝ N 1 և N 2 լրացուցիչ համաձայնագրերում» բառերը և «28,839,447» թիվը փոխարինել «32,910,939» թվով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հունիսի 2017 թվականի N Մ-548- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ) (1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 20-ի N 01.1/14-2/11091-17 Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի 23-ի N ՆՁ/22.2/8002-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 21-ի N 06/3-8/21358-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք և բժշկական պարագաներ՝ 560 արկղ, 3,329 կգ քաշով, 45,979.03 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7,100.9 եվրո, ցանկը կցվում է, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

[redacted]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Ախտահանիչ / մաքրող նյութ մակերեսների համար, 2լ տարա + դոզավորման պոմպ | 12 | 140.88 |
| 2 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 6000 | 27948.00 |
| 3 | Ներարկիչ, Լուեր, 10մլ | 14700 | 498.33 |
| 4 | Կաթիլաներարկման "Y" կոմպլեկտ, լուեր փականով, օդաթափանցիկ, ստերիլ, միանգամյա օգտագործման | 3800 | 1293.90 |
| 5 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 2400 | 1637.76 |
| 6 | Կաթիլաներարկման "Y" կոմպլեկտ, լուեր փականով, օդաթափանցիկ, ստերիլ, միանգամյա օգտագործման | 4800 | 1634.40 |
| 7 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 2400 | 1637.76 |
| 8 | Կաթիլաներարկման "Y" կոմպլեկտ, լուեր փականով, օդաթափանցիկ, ստերիլ, միանգամյա օգտագործման | 4800 | 1634.40 |
| 9 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 3500 | 2388.40 |
| 10 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 3500 | 2388.40 |
| 11 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 3500 | 2388.40 |
| 12 | Նատրիումի քլորիդ, 0.9%, 100մլ, պլաստիկ պարկ | 3500 | 2388.40 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 45979.03 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հունիսի 2017 թվականի N Մ-549-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ «ՀՈՐԲԵԼՅԱՆԱԿԱՆ» ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 14-ի N 01.1/14-2/10624-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 12-ի N 06/3-8/20267-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 13-ի N 02/14/10075-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հունիսի 12-ի N 1/06/730-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) իրականացվող՝ 321,378,262 դրամ ընդհանուր արժողությամբ «Արմավիր քաղաքի «Հորբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Նիդերլանդների Թագավորության «Condor Carpets» ընկերության հետ (Randweg 14, 8061 RW Hasselt, The Netherlands) 2017 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրի N NBR.65881114CD-Rev 001 նախահաշվով սահմանված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 17,875 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի



պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Արմավիրի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական
անձանց [illegible] Հայրապետյանի կողմից

«07» հունիսի 2017 թ.

«Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արմավիր մարզի տարածաշրջանում ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Արմավիր քաղաքային համայնքի, Հանրապետության փողոց 130 հասցեում «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում: |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն – (UEFA-Շվեյցարիա, Նիոն) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Արմավիր քաղաքային համայնքում, սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 321,378,262 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915)՝ ի դեմս Արմավիր քաղաքային համայնքի, Հանրապետության փողոց 130 հասցեում վերակառուցվող «Հոբելյանական» մարզադաշտի: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մարզադաշտի վերակառուցման ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 60,404,810 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:<br>2. Ոռոգման համակարգերի նախագծման, կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:<br>3. Խաղադաշտերի կառուցում՝ 80,124,452 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:<br>4. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 9,900,000 դրամ արժողությամբ. նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հունիսի 7-ից մինչև 2018 թվականի հունիսի 30-ը:<br>5. Շինա[illegible]երի, մարզագույքի, խաղադաշտերի խնամքի սարքավորումների, խոտի [illegible] և պար[illegible]երի, արհեստական խոտածածկերի, ռետինե գնդիկների, արհեստական խոտածածկի մարզագույքի, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի, կվարցային ավազի [illegible] 155,949,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվական[illegible] մինչև 2018 թվականի հունիսի 30-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - մարզադաշտի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 45,514,810 դրամ,<br>- պոմպակայանի շինարարական աշխատանքների իրականացում՝ 14,890,000 դրամ,<br>- ոռոգման համակարգերի նախագծման, կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ ,<br>- մեկ ստանդարտ չափսի խաղադաշտի շինարարական աշխատնքների իրականացում՝ 33,190,300 դրամ,<br>- մեկ արհեստական խոտածածկով խաղադաշտի հիմք դրենաժային համակարգի կառուցում՝ 46,934,152 դրամ,<br>- արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 18,000 եվրոյին համարժեք՝ 9,900,000 դրամ,<br>շինանյութի՝ 10,000,000 դրամ, մարզագույքի՝ 5,000,000 դրամ, խաղադաշտի խնամքի սարքավորումների՝ 25,000,000 դրամ, խոտի սերմի և պարարտանյութերի՝ 20,000,000 դրամ ներմուծում,<br>- խաղադաշտի արհեստական խոտածածկի (տեղադրման նյութերով և պարագաներով)՝ 92,000 եվրոյին համարժեք՝ 50,600,000 դրամ, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի՝ 10,250 եվրոյին համարժեք՝ 5,637,500 դրամ, մարզագույքի՝ 5,430 եվրոյին համարժեք՝ 2,986,500 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կկազմեն 12,000 եվրոյին համարժեք՝ 6,600,000 դրամ,<br>- արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների՝ 17,500 եվրոյին համարժեք՝ 9,625,000 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կկազմեն՝ 30,000 եվրոյին համարժեք՝ 16,500,000 դրամ,<br>- կվարցային ավազի՝ 8,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք՝ 4,000,000 դրամ ներմուծում. ներառյալ փոխադրման ծախսերը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, [illegible] ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Արմավիրի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ: |

[illegible] ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-550-Ա**
**քաղ. Երևան**

### «ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 19-ի N 01.1/14-2/10936-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 15-ի N 06/3-8/20974-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնության պետական «Գերմանական էլեկտրոնային սինքրոտրոն - DESY» հետազոտական կենտրոնի կողմից, որպես օժանդակություն, «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի հասցեով ուղարկված գիտական սարքավորման (մեկ տեղ, 7,000 կգ ընդհանուր քաշով, 50,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,214,000 դրամ, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-551-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 8-ի N 07/80-2/10333-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 8-ի N 06/3-8/20026-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված պղնձյա թիթեղները (մեկ տեղ, 465 կգ ընդհանուր քաշով, 244,561.50 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 10,000 ռուսական ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2017 թվականի N Մ-552-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 07/14-2/10361-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 8-ի N 06/3-8/20027-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խաղադաշտի խոտածածկի սերմը, պարարտանյութը, խոտածածկը մշակող տեխնիկայի պահեստամասերը, նշագծելու մեքենան և ներկը (1,194 տեղ, 18,270 կգ ընդհանուր քաշով, 54,673.83 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**23 հունիսի 2017 թվականի N Մ-553-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 20-ի N 01.1/14-2/11048-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 15-ի N 06/3-8/20969-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) «iMac» համակարգիչ՝ 10 հատ, 2 տեղ, 131 կգ ընդհանուր քաշով, 12,680 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 600 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ.

2) ներկեր, կտորներ և մանեկեններ՝ 6 տեղ, 71 կգ ընդհանուր քաշով, 108.84 եվրոյին և 2,949 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքներով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 575 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-554-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 19-ի N 01.1/14-2/10933-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 15-ի N 06/3-8/20970-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա ու 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հալդի քոնսալթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08417251) 2017 թվականի մայիսի 20-ին կնքված՝ N HC-02/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ճամբարի ներքին ճանապարհային ցանցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների մատուցում՝ 380,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-555-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 01.1/14-2/10355-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 7-ի N 06/3-8/19898-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1226-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2017 թվականի մայիսի 29-ին կնքված՝ N ՎՏՀ/08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 160 քառ. մետր տրավերտինե երեսապատման սալիկների ձեռքբերում՝ 1,920,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-556-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N Մ-477-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 20-ի N 01.1/14-2/11039-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 19-ի N 06/3-8/21105-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցված բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի ներքին և արտաքին հարդարում» ծրագրի մասին» N Մ-477-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2017 թվականի մայիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ծննդատան մասնաշենքի ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 151,538,414 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-557-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 9-ի N 07/14-2/10358-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 7-ի N 06/3-8/19900-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Նիդերլանդների Թագավորության «Condor Carpets» ընկերության հետ (Randweg 14, 8061 RW Hasselt, The Netherlands) 2017 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրի N NBR.65891114CD-Rev 001 նախահաշվով սահմանված գործարքը, որով նախատեսվում է խաղադաշտի արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 19,800 եվրոյին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**23 հունիսի 2017 թվականի N Մ-558-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 20-ի N 01.1/14-2/11052-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 19-ի N 06/3-8/21127-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սոֆթ թայմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02608299) 2017 թվականի մայիսի 31-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչային տեխնիկայի ընթացիկ սպասարկման ծառայությունների մատուցում՝ 880,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ռեջինոքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09413172) 2017 թվականի հունիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 109,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Մի & ԳԱ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02237048) 2017 թվականի հունիսի 6-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի ձեռքբերում՝ 129,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «Զիգզագ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500164) 2017 թվականի հունիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խոհանոցային սարքավորումների ձեռքբերում՝ 144,790 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ռեդ-փունթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2017 թվականի հունիսի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 338,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

